ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/115

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 115

«ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ 4 տարի ժամկետով, 18 դեկտեմբերի 2019 թ. N 72

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կրթահամալիր) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 23 օգոստոսի 2023 թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 30 հունվարի 2024 թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 25-28 հունիսի 2024 թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 28 հոկտեմբերի 2024 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 8 նոյեմբերի 2024թ.

Կրթահամալիրի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Ասյա Սիմոնյան՝** Շիրակի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս,փորձագիտական խմբի ղեկավար
- **Իոն Ռոչանու՝** Ռումինիայի ազգային պաշտպանության համալսարանի պրոֆեսոր, դոկտորական ուսումնասիրությունների խորհրդի տնօրեն, փորձագիտական խմբի միջազգային անդամ
- **Աիդա Թադևոսյան՝** իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ
- **Գեղամ Կարոյան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի ուսումնական գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ
- **Ավետիք Խոստեղյան՝** Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման և SS ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող, ուսանող փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ներկայումս ՀՀ ոստիկանության համակարգը գտնվում է բարեփոխումների փուլում, որի առանցքում կարևոր դեր ունի ՆԳՆ կրթահամալիրը՝ որպես ոլորտի համար մասնագիտական կադրեր պատրաստող միակ ուսումնական հաստատություն: Հավատարմագրման հանձնաժողովի որոշման ընդունման պահին կրթահամալիրին միացել էր նաև Ճգնաժամային կառավարման ակադեմիան, ինչի հետևանքով հաստատությունը գտնվում է անցումային փուլում՝ պայմանավորված ինչպես կառավարման կառուցվածքի փոփոխություններով, այնպես էլ կրթական ծրագրերի վերանայման և զարգացման անհրաժեշտությամբ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Կրթահամալիրի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով բուհի փորձագիտական գնահատման վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. *ՆԳՆ կրթահամալիրը ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում*

Կրթահամալիրում գործում է կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավման ռազմավարություն, որը ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը: Բարելավման գործընթացը հիմնված է կրթական ծրագրերի պարբերական վերանայման, պետական մարմինների հետ համագործակցության, և ուսումնական գործընթացում արդի ու գործնական հմտությունների ինտեգրման վրա: Կրթահամալիրն ունի բարելավված օրինակելի կրթական ծրագիր, որի հաջողված փորձն համակարգված տարածում է մյուս ծրագրերի վրա, ապահովելով կրթական ծրագրերի բարելավում: Բացի այդ, ՃԿՊԱ-ի Կրթահամալիրին միավորման գործընթացի շրջանակում մշակվում են նոր կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են ոլորտի արդի պահանջներին:

Կրթահամալիրում առկա է ՄԿԾ-ների նպատակների իրագործման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով, իսկ պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավվածությունը նպաստում է կիրառական հմտությունների զարգացմանը և կրթական գործընթացի գործնական կողմի ամրապնդմանը: Չնայած որ կրթահամալիրում գործում են դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, մինչ այժմ բացակայել է դասախոսների վերապատրաստման ինստիտուցիոնալ մեխանիզմը, ինչը պահանջում է հետագա զարգացում:

Կրթահամալիրի առկա ռեսուրսները ապահովում են կրթական ծրագրերի նպատակների իրագործումը բոլոր կրթական աստիճաններում: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո զգալիորեն բարելավվել է նյութատեխնիկական բազան՝ մասնագիտական կաբինետների, լաբորատորիաների և լսարանների վերազինման միջոցով: Նոր մասնագիտացված լսարանների և լաբորատորիաների ստեղծումը նպաստել է դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացմանը, ինչպես նաև կրթական ծրագրերով սահմանված վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերմանը:

2. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը*

Կրթահամալիրի կառավարման համակարգը գտնվում է վերափոխման գործընթացում՝ ուղղված որակի ապահովման համակարգի ամրապնդմանը և արդյունավետ կառավարման մոդելի ձևավորմանը: Ռազմավարական կառավարման շրջանակում արդյունքները մշտադիտարկվում են, սակայն գնահատումը դեռևս չի իրականացվում առանցքային ցուցիչների հիման վրա: Գործող մոդելում գերակշռում են ուղղահայաց կապերը, որոնք մի կողմից նպաստել են օպերատիվ որոշումների կայացմանը և հաշվետվողականության համակարգի ամրապնդմանը, սակայն մյուս կողմից որոշակիորեն սահմանափակել են որակի ապահովման համակարգի անկախությունը:

ՆԳՆ Կրթահամալիրին Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միավորման արդյունքում ձևավորվել է նոր կազմակերպահրավական կառուցվածք, ինչը հանգեցրել է կառավարման մեխանիզմների վերանայման անհրաժեշտությանը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են միջազգային չափանիշներով արժանահավատ որակավորումների շնորհմանը*

Կրթահամալիրը համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ, սակայն միջազգային շարժունության մակարդակը դեռևս ցածր է ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական կազմի շրջանում: Օտար լեզուների իմացության սահմանափակումները, ինչպես նաև միջազգային շարժունության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը որոշակիորեն խոչընդոտում են ակադեմիական փոխանակման հնարավորությունների ընդլայնմանը:

Կրթահամալիրում իրականացվում են կիրառական հետազոտություններ: Ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական գործընթացներին արտացոլվում է կուրսային, ավարտական և մագիստրոսական թեզային աշխատանքներում, ինչը վկայում է հետազոտական կարողությունների ձևավորման ուղղությամբ իրականացվող քայլերի մասին: Չնայած գիտահետազոտական գործունեությունը ամրագրված է Կրթահամալիրի ռազմավարությունում, առկա չեն նշանակալի միջազգային կամ ազգային հետազոտական ծրագրեր, որոնցում Կրթահամալիրը ներգրավված է, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի առանձին անդամների ներդրումը գիտական կարևոր նախագծերում սահմանափակ է:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Կրթահամալիրի կողմից ներկայացված նախնական ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ին շնորհել **ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը՝ հաշվի առնելով **«Որակի ներքին ապահովման համակարգը»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**

- Գնահատման առանցքային ցուցանիշների մշակմանը և ներդրմանը՝ ապահովելու կառավարման համակարգի արդյունավետ փոխկապակցվածությունը մշտադիտարկման գործընթացների հետ,
- կրթության իրականացման ինքնավարության պահպանմանը՝ ապահովելով ուսումնական հաստատության անկախությունը ուսումնական գործընթացի կազմակերպման, դասավանդման մեթոդների ընտրության և կրթական ծրագրերի մշակման ու իրականացման հարցերում՝ որակի չափանիշներին համապատասխան,
- դասախոսական կազմի ակադեմիականության պահպանմանը՝ ապահովելով նրանց մասնագիտական զարգացումը, գիտական գործունեության ներգրավվածությունը,
- որակի ներքին ապահովման գործուն համակարգի անկախության ապահովմանն ու շարունակական զարգացմանը:

4. Հաշվի առնելով, որ ՆԳՆ Կրթահամալիրի կազմի մեջ է ներառվել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան (ՃԿՊԱ), Հավատարմագրման հանձնաժողովն առաջարկում է Կրթահամալիրին միավորման գործընթացի ավարտից մեկ տարի անց իրականացնել արտաքին գնահատում՝ ՈԱԱԿ-ի մշտադիտարկմամբ: Այս գործընթացը պետք է ներառվի թերությունների վերացման ծրագրում՝ ապահովելով միավորման ազդեցության գնահատում, կառավարման արդյունավետության վերլուծություն և որակի ապահովման հետագա բարելավման գործողությունների մշակում:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 1